

“ՆԱԻԲԻ ԻՆՇՈՒԲԱՆՍ” ապահովագրական ՍՊԸ

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**

2012թ երրորդ եռամսյակ

### **Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն**

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնետոմսերի 22.5%-ը պատկանում է Հովիկ Շահինյանին (ՀՀ, ք. Ստեփանավան, Պողոյան փողոց, տուն 20), 22.5%-ը՝ Վահան Գաբրիելյանին (ՀՀ, ք. Երևան, Քանաքեռի 2-րդ փողոց, տուն 19), 30%-ը՝ Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Չորափի փողոց 72ա), 12,5%-ը՝ Վահագն Շահինյանին (ՀՀ, ք. Երևան, Շահումյարյան փողոց 6, բ. ն.10), 12.5%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բ. ն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 2012թ սեպտեմբերի 30-ի դրությամբ ընկերությունն ունի 5 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հստակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունն ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ :

30.09.2012թ դրությամբ ընկերությունն ունի 349 ապահովագրական գործակալ և 131 աշխատակից :

### **Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ**

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է: Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամներով:

### **Ծանոթագրություն 4 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է

### **Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում**

**Ապահովագրության պայմանագրեր**

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

### **Վերաապահովագրական ակտիվներ**

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում:

Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք:

Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

### **Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

### **Հիմնական միջոցներ**

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

### **Արտարժույթ**

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ

Ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

### **Հարկեր (ընթացիկ և հետաձգված)**

Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք ճանաչված են՝

ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում

բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

### **Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ**

Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում :

### **Ֆինանսական գործիքներ**

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, սպահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները ,ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը , այլ պարտավորությունները:

### **Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում**

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/ վնասում:

### **Ռիսկային միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

### **Այլ ֆինանսական պարտավորություններ**

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով :

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

### **Պահուստներ**

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:

Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՄՍ 4-ի պահանջների համաձայն:

### **Աշխատակիցներին հատուցումներ**

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները , ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

### **Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում**

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ. կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

**Ծանոթագրություն 6. Չուտ ապահովագրավճարներ**

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր, որոնց գծով հավաքագրվել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	13,843	4653		
Առողջության ապահովագրություն	1,522,330	1518		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	230,449	140743	20,186	17485
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	61,262	52157	30,871	26547
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	157,254	139823	62,137	32610
Ավտո պատասխանատվություն	1,490	346	11	
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	45,967	117519	3,529	4176
Ֆինանսական վնասների ապահովագրություն	11,269		10,521	
Աջակցության ապահովագրություն	17,497	11442		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,406,599	1711184		
<b>Ընդամենը</b>	<b>3,467,960</b>	<b>2179384</b>	<b>127255</b>	<b>80818</b>

**Ծանոթագրություն 9. Ներդրումային եկամուտ**

Ներդրումային եկամտի աղբյուրը	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Ավանդներ ռեզիդենտ բանկերում	109246	112968
ՀՀ պետական պարտատոմսեր		245
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր		977
Տրամադրված փոխառություններ	28068	27710
Այլ ներդրումներ	707	2252
<b>Ընդամենը</b>	<b>138021</b>	<b>144152</b>

**Ծանոթագրություն 10. Չուտ հատուցումներ**

Ապահովագրության դասեր, որոնց գծով վճարվել են հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	463	70		
Առողջության ապահովագրություն	144098	113		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	133347	83510	7983	8085

Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	4450	2504	4298	2088
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	1708	1602		391
Ավտո պատասխանատվություն	1611	914		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	244659	77220		
Աջակցության ապահովագրություն	2229	749		49
Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	701775	383757		
<b>Ընդամենը</b>	<b>1234340</b>	<b>550439</b>	<b>12281</b>	<b>10613</b>

### Ծանոթագրություն 11. Չեռքերման ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Առաջնային միջնորդավճար	321607	183071
Երկրորդային միջնորդավճար	544	2020
<b>Ընդամենը</b>	<b>156106</b>	<b>185091</b>

### Ծանոթագրություն 12. Այլ գործառնական և վարչական ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Գաղարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ	64722	36891
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	13627	7236
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ , արձակուրդային պահուստ	289789	183079
Սոցիալական ապահովագրության գծով ծախսեր	41195	22675
Գործուղման ծախսեր	615	442
<i>Ուսուցման ծախսեր</i>	617	200
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	28,273	5415
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	1,505	1332
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	17,179	3667
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	4610	8030
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	6748	14686
Շենքի վերանորոգում	258	3767
<i>Կապ և հեռահաղորդակցություն</i>	16,828	14690
Գրասենյակային, տնտեսական,չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն	68923	35895
Տոկոսային ծախսեր	1,365	
<b>Ընդամենը</b>	<b>556254</b>	<b>338005</b>

**Ծանոթագրություն 13. Այլ ծախսեր**

Ծախսի արդյուրը	Ծախսի մեծությունը	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Գովազդի գծով ծախսեր	54,944	27365
Ներկայացուցչական ծախսեր	4,349	1477
Անդամավճարներ	40631	28862
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	67597	31869
Տուգանքներ և այլ ծախսեր	11288	2528
Հիմնական միջոցների իրացումից գուտ ծախս	56	
Ֆինանսական ակտիվների օտարումից գուտ ծախս	2026	
<b>Ընդամենը</b>	<b>180891</b>	<b>92101</b>

**Ծանոթագրություն 14. Ծախսեր կապված շահութահարկի հետ.**

Շահութահարկի գծով ծախսի /եկամտի/ խոշոր բաղադրիչներ	Ծախսի մեծությունը	
	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	29000	105000
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում		491
Հետաձգված հարկի գծով ծախս	272	

**Ծանոթագրություն 15. ոչ նյութական ակտիվներ**

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալները.	Ընդամենը
<b>Մկրթական արժեք</b>						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	20159			11995		32154
Ավելացում	1967					1967
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	22126			11995		34121
Ավելացում	134					134
Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճգրտում						
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	22260			11995		34255

**Կուտակված մաշվածություն**

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	6679			3993		10672
Ավելացում	504			4450		4954
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	7183			8443		15626
Ավելացում	609			3251		3860
Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ժգրտում						
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	7792			11694		19486

**Չուտ հաշվեկշռային արժեք**

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	14468			301		14769
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	14943			3552		18495

**Ծանոթագրություն 16. Ընկերության գործունեության համար օգտագործվող Հիմնական միջոցներ**

	Շեն-քեր	Համակարգ-չային և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց. գծով կապիտալ ներդր.	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալ ներդր.	Ընդամենը
--	---------	--------------------------------	------------------	-----------------------	---------------------------------	--------------------------------------	----------

**Սկզբնական արժեք**

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	341089	52260	41745	117594			552688
Ավելացում		4272	3557	837			8666
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	341089	56532	45302	118431			561354
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	341089	56532	45302	118431			561354
Ավելացում		17975		5829			23804
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	341089	74507	45302	124260			585158

**Կուտակված մաշվածություն**

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	39431	32546	11418	25853			109248
Ավելացում	4263	5641	2201	6720			18825
Օտարում							-4157
Վերագնահատում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	43694	38187	13619	32573			128073
Ավելացում	4264	6891	2352	6871			
Օտարում							
Վերագնահատում							



Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>47958</b>	<b>45078</b>	<b>15971</b>	<b>39444</b>			<b>148451</b>

*Զուտ հաշվեկշռային արժեք*

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	293131	29429	29331	84816			436707
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	297395	18345	31683	85858			433281

**Ծանոթագրություն 17. Ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվի կատեգորիա	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Իրական արժեքով շահույթ/վնասով չափվող ֆինանսական ակտիվներ	1692526	226159
Հնարավոր կորուստների պահուստ	-55186	-32718
Ընդամենը	1637340	2236441
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	813097	179780
Հրավոր կորուստների պահուստ	-113010	-20086
<b>Ընդամենը</b>	<b>700087</b>	<b>159694</b>

**Ծանոթագրություն 18. Վերաապահովագրական ակտիվներ**

	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
ՉԱՊ	75,508	50260
ՆՉՊՊ	174,131	1624
Վերաապահովագրողի ց ստացվելիք միջնորդավճար	27,478	13426
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	12,556	20789
Դադարեցված պայմանագրերի գծով վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ	927	207
Հնարավոր կորուստների պահուստ	-2906	-157
<b>Ընդամենը</b>	<b>287694</b>	<b>67438</b>

**Ծանոթագրություն 19. Այլ ակտիվներ**

	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ ժամանակաշրջան
Խիստ հաշվառման բլանկներ, վառելիք, պաշարներ	3025	6179
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	1,846	
<b>Ընդամենը</b>	<b>6794</b>	<b>7506</b>

**Ծանոթագրություն 20. Դրամական միջոցներ**

	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Կանխիկ դրամ դրամարկղում և ճանապարհին	2872	2997
Բանկային հաշիվներ բանկերում	113,095	14370
Հնարավոր կորուստների պահուստ	-1131	-144
<b>Ընդամենը</b>	<b>114836</b>	<b>17223</b>

**Ծանոթագրություն 21. Հարկում**

Ընկերությունը հաշվեկշռում ճանաչել է 3384 հազար դրամ հետաձգված հարկային ակտիվ, որն առաջացել է աշխատակիցների հատուցումների գծով ձևավորված պարտավորությունների հաշվեկշռային և հարկային բազայի տարբերությունից:

Ընկերությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչել է 9273 հազար դրամ հետաձգված հարկային ակտիվ, որը առաջացել է շենքերի վերագնահատման հետևանքով:

**Ծանոթագրություն 22. Ապահովագրության գծով Ստացվելիք գումարներ**

	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Ապահովադիրներից	871681	113377
Ապահովագրական գործակալներից	109,712	37893
Հնարավոր կորուստների պահուստ	-47738	-21556
<b>Ընդամենը</b>	<b>933655</b>	<b>129714</b>

**Ծանոթագրություն 23. Հետաձգված ծախսեր**

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	331562
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	119341
Ամորտիզացիա	156106
Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	294797

**Ծանոթագրություն 24. Հաշվեգրած եկամուտ**

Հաշվեգրած եկամտի տեսակ	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ համադրելի ժամանակաշրջան
Սուբբոզացիա	382,269	91196
Միջնորդավճարներ	30,097	21562
Այլ գործառնական եկամուտ	8010	30817
Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից	514	

**Ծանոթագրություն 25. Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորություններ**

Պարտավորության աղբյուր	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Հատուցումների գծով	32013	26300
Միջնորդներին վճարվելիք գումարներ	33353	7996
Ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	5362	1262
<b>Ընդամենը</b>	<b>70728</b>	<b>35558</b>

**Ծանոթագրություն 26. Կրեդիտորական պարտավորություններ վերաապահովագրության գծով**

Պարտավորություն ըստ դասերի	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ ժամանակաշրջան
Ցամաքային տրանսպորտ	18764	14829
Բեռ	27863	12213
Ավտոմեք պատասխանատվություն	11	

Գույք	67806	20527
Ֆինանսական ռիսկ	5310	
Պայմանագրային պարտավորություն		3247
Միջնորդներին վճարվելիք գումարներ		
<b>Ընդամենը</b>	<b>119754</b>	<b>50816</b>

**Ծանոթագրություն 27. Այլ պարտավորություններ**

Պարտավորության աղբյուր	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ ժամանակաշրջան
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	18623	17320
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	36788	111419
Հետաձգված հարկային պարտավորություններ	581	10034
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	23067	10147
Վճարվելիք շահաբաժիններ	45500	5402
Ստացված կանխավճարներ և այլ պարտավորություններ	74548	15010
Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ	14103	2070
<b>Ընդամենը</b>	<b>213210</b>	<b>171402</b>

**Ծանոթագրություն 28. Ապահովագրական պահուստներ**

Ապահովագրության դաս	հաշվետու ժամանակաշրջան	նախորդ ժամանակաշրջան
ՉԱՊ	1666174	765029
Պահանջների պահուստ	631889	241143
<b>Այլ</b>	<b>71666</b>	<b>106358</b>

**Ծանոթագրություն 29. Կապիտալ**

30.09.12թ –ի դրությամբ Ընկերության հայատարաված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1 290 000 հազար:

**Ծանոթագրություն 93. Արտահաշվեկշռային հաշիվներ**

Ցուցանիշի անվանումը	հազար դրամ	
	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ օգտագործվող շենքեր	33224	1,068
Գրավադրված Գրամական միջոցներ	126442	
Որպես գրավ պահվող անշարժ գույք	565700	342400
Ստացված երաշխավորություններ	237920	
Պայմանական պարտավորություններ	384687	424,849
Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր	142265	141,767

Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	372530283	753,514,956
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով վերաապահովագրական գումարներ	73236182	80,698,599

«Նսիրի-Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ

Գործադիր տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

Դավիթ Բաղդասարյան

Նադեժդա Գասպարյան